ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. մայիսի 31 թիվ 48 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ << ԵՂԻՊԱՏՐՈՒՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>, << ՁՈՐԱԳԼԽԻ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>, <<ԹԱԼԻՆԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, << ԹԱԼԻՆԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ԵՎ << ՈՒՋԱՆԻ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ- ՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները.

Կարգադրում եմ՝

1. 2013 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի << Եղիպատրուշի միջնակարգ դպրոց>>, << Ձորագլխի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց >>, <<Թալինի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց >>, << Թալինի թիվ 2 հիմնական դպրոց >> և << Ուջանի Զ. Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2010, 2011 և 2012 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, բաժնի պետ՝ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ՝ Իշխան Բարսեղյանի, Սիրան Ասատրյանի, Արիս Թովմասյանի և Կարեն Սուքիասյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ ՊՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 20 աշխատանքային օր՝ [illegible]անքները սկսել 2013 թվականի հունիսի 3-ից ավարտել 2013 թվականի հունիսի 28-[illegible]

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ